

— Դիւ գնա՛, միջ կը բանանք, կըսին՝

Ձին կը քշի, կգեայ քեարը լերայ կը կանգնը:

Ձեռ կտայ, լիւն կը թլի դեն, կը տխնայ ահագին քեարըր, յըմենն էլ թրի յեռջև կտռտուած ի, քեարի կտուրքիւր ձեռ կը թլի, թալի դեն, տխնայ գեօմշու կաշիք, յըմեն փառչա փառչա էրած ի:

220. Մէլըքի ջանդըկի մէկ եան ժիւս կուսըլլը ի, մէկ ձեռ մէկ եան ժիւս մնացիւր ի, չկայ, ցլրուելու յանթիւնդ—Սիլ ջիւր գնացիւր ի:

Գաւիթ յիւր աչքիբով տխաւ, հաւատայ:

Էսայ.—Մարէ՛, իս կերթամ, մնացէք բարեօլ: Իմ ախպէր Մէլըք դիւք խանէք դիւս:

221. Գաւիթ ձիւր գլեօխ կէնի, չաաըրից կըլնը դիւս, կերթայ ասկեարը մէջ, կըսի.—Ձի յըմենուն իզին տուիմ՝ մէկ մէկ ձի տնիւր գեացէք. իմ ջանին ասդա էրէք, իմ խօր-մօրն էլ օզորմի տուէք: Ձի խարձն էլ բախշիմ ձի:

Էդա ասկեար Գաւիթն շատ տուղա կէնին, կօխնին, համա չըն աւարնայ, թէ Մէլըք սպանուի ի:

— Խա՛, Գաւիթ, կեօրպան քեօ դըլլիւն, դորիս դիւ գինա՛, Աստուած քեօ խիա, Աստուած քեօ բան յաջուղի, Աստուած քի սաղջանութեն տայ, Աստուած քեօ էն խօր մօրն արբայութեն տայ:

Գաւիթ էն տեղ շատ կը խնդանայ, փառք կտայ Ասաը-ճուն ու ձին կը քշի դէմ Սասուն:

222. Էդա ասկեարի գլխաուրքիւր ասկեարն իզին չըն իտայ. լուր մէկ մէկ ուր տուն գեայ, կը բեօռան.—Է՛յ, մի՛ք էրթայ. էրթանք, Մէլըք տխնանք, մհա սուրթ ի, թէ ազարթ ի: Մէկ մէկու կըսի.—Կնունց խօքն ի, էրթանք, տխնանք:

Կգեան, էդա փաշէք, Մէլըքի չաաըրի տակ կըիշկին, մէկ խատ աղջեկ շրիա՛ կապած մէջքին, կախած ի էդա խուրու մէջ, գիլըփի ջանտակ, մէկ պղտիկ կտուր ի մնացիւր ի, կըսին.

—Աղջեկ, շրիա կապի: Աղջեկ շրիա կապի ձեռայ, խիա կլայ, խիա կըսի.—Քեշէք: Քեշին, խանին գիւս:

223. Կը խանին, տխնան մէկ կտուր ի մնացիւր ի. էն կտուրն էլ ինչպէս վառուուի ի, ինչպէս կրակը մէջ փէա գնիս, վառուը, սիվանայ, սիօն սիվացիւր ի:

Վերուն էն կէս ջանդակ կը բերին տուն:

Էդա փաշէք էլ կը բեօռան ասկեարն, մէկ մէկ ձի տուն